ԿՈԼԵԿՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Հայտնի է, որ մարդու հասարակական ճակատագրի և, մասնավորապես, նրա կոլեկտիվիստական հոգեբանության ձևավորման տեսական ուսումնասիրությունները կապված են կապիտալիզմի առաջացման հետ։ Կապիտալիստական տնտեսակարգը դուրս մղեց նախորդ դարաշրջաններին հատուկ մարդկային կապերի անհատական ձևը և, ազատագրելով դրանք բնատնտեսության սահմանափակ, տեղական կապանքներից, հարաբերական ինքնուրույնություն շնորհեց մարդկանց։ Անհատական «կենսագրությունները» սկսեցին կարգավորվել նոր գործոններով և ենթարկվել նոր օրինաչափությունների։ Այդ ժամանակաշրջանում մարդու փոխհարաբերությունների բնույթը հասարակության հետ բարդանում է և ստանում նոր բազմատարր կառուցվածք։ Այս կապակցությամբ առաջանում են լուսաբանման կարոտ մի շարք հարցեր. ի՞նչ դրդապատճառներով է ղեկավարվում մարդը իր սոցիալական հարաբերություններում, ի՞նչն է առավելապես պայմանավորում հարաբերությունների առանձնահատուկ ձևը, ո՞ր սոցիալ-հոգեբանական միտումներն են գերակշռում մարդկային ընդհանրություններում նրանց զարգացման ընթացքում։ Մեր նպատակն է քննական վերլուծության ենթարկել մի շարք տեսություններ, որոնք ուղղված են նշված փոխհարաբերությունները պայմանավորող ներքին պրոցեսների բացահայտմանը։

Կապիտալիստական տնտեսակարգը մարդուն հարաբերական ինքնուրույնություն շնորհելով հանդերձ, իր մունետիկների շուրթերով ազդարարեց, որ մարդու ձգտումը դեպի ինքնավար. մեկուսի գոյությունը, նրա անջրպետումը հասարակությունից, մասնազատումը, օտարումը ընդհանրությունից, «ես»-ի հակադրումը «մենք»-ին ավելի բնական, ավելի նորմալ են, քան համախմբման միտումները։ Ավելին, բուրժուական տեսաբանները պնդում են, որ մարդու մեջ առավել էական է այն, ինչը տարբերում է նրան ուրիշներից, և ոչ թե այն, ինչը նմանեցնում է նրան այլոց։ Այսպես են հարցը դնում նեոպոզիտիվիստները, որոնք «Մարդը ինչպես նա կա» մոդելը համարում են ավելի հեռանկարային, իրական, քան «Մարդը ինչպիսին նա պետք է լինի» մոդելը, որը դիտում են որպես մետաֆիզիկական, անարդյունք ընդհանրացում։ Թեև այս վեճի ակունքները գալիս են միջնադարից և արդյունք են ռեալիստների ու նոմինալիստների բախումների, այնուամենայնիվ, այն հարցը, թե ի՞նչն է ավելի հատկանշական մարդկային բնույթին՝ հակադրումը ընդհանրությանը, թե՞ նույնացումը նրա հետ, առ այսօր չի դադարում իրարամերժ կարծիքների ու տեսությունների առարկա լինելուց։

Բուրժուական տեսաբանների երկերում բացառություն չեն կազմում նաև այնպիսի ուսումնասիրությունները, որոնք, կարծեք, կոչված են հերքելու

իրենց իսկ տեսակետները, թեև հեղինակներն այդպիսի հատուկ խնդիր իրենց առջև չեն դրել։

2. Սպենսերը (պոզիտիվիզմի հիմնադիրներից մեկը), ուսումնասիրելով կենդանիների ապրելակերպի սոցիալական տարրերը, բնավ չէր ձգտում դիտարկել կոլեկտիվիզմը որպես մարդու էությանը ներհատուկ մի երևույթ։ Սակայն նա որոշակի կապ էր տեսնում սննդի տեղադրության և նրա հայթայթման եղանակների ու կենդանիների կեցության ձևերի միջև։ Նրա կարծիքով, սննդի տեղադրությունն է կանխորոշում որսի կոլեկտիվ կամ անհատական եղանակները։ Եթե գայլի սնունդը «խոշոր է և ցրված անտառներում», ապա վերջինս ընդունակ է առանց որևէ օգնության ինքնուրույնորեն հայթայթել իր կերը։ Դա է պատճառը, որ գայլերին ավելի ձեռնտու են որսի մեկուսացված ձևերը։ Սպենսերը, սակայն, նշում է, որ գայլերի և նրանց աղգակիցների մոտ նկատվում է որոշակի ձգտում դեպի «համագործակցությունը»։ Որսի կոլեկտիվ եղանակները ընդհանրապես բացառված չեն գիշատիչների մոտ, թեև որսի անհատական ձևերն ավելի են ընդունված[1]։

Այնուհետև, քննելով խոտակերների, թռչունների սննդի տեղադրության և ապրելակերպի առանձնահատկությունները, Սպենսերը գալիս է այն եզրակացության, որ համագործակցությունը նման էակների միջև ոչ միայն սոցիալական, այլև բնակենսաբանական արմատներ ունի։ Ի՞նչն է ի սկզբանե ավելի բնորոշ եղել մարդկանց՝ առանձին, զորեղ անձնավորությունների ազդեցությամբ մարդկային հանրության տրոհումը հակամարտ խմբավորումների, թե՞ նրանց միասնությունը, համագործակցությունը, անձնական և հասարակական շահերի ներդաշնակ միացումը։ Փաստերը հօդուտ կոլեկտիվիզմի առաջնության առավել համոզիչ են։

Հետազոտողներից շատերը հոգեբանորեն վերլուծել և նկարագրել են մարդու տրամադրվածությունը դեպի համակարեկցանքը, նրա՝ ուրիշի ցավերն ու ուրախությունները որպես սեփական ընկալելու հատկությունը։ Սակայն նրանց մտքովն անդամ չի անցել, որ, անդրադառնալով այդ հոգեբանական երևույթին, նրանք հակադրվում են այն տեսակետներին, որոնք շեշտը դնում էին «ես»-ի, և ոչ թե «ուրիշի» ego-ի, և ոչ թե alter-ի վրա։ «Մենք գիտենք,— գրում է Թեոդոր Լիպսը,— որ այն բանի յուրաքանչյուր գիտակցումը, թե ինչ է կատարվում ուրիշի անձնավորության մեջ, իր գոյությամբ պարտական է ներդրացողությանը։ Այն ամենը, ինչ որ կազմում է ուրիշի անձը, ինչպես նաև նրա ինքնադրսևորման յուրաքանչյուր եղանակը, նրա ցանկությունն ու գործելակերպը, նրա դատողությունը, բավականությունը և դժգոհությունը, որքանով ես դրանց մասին գիտեմ, իրենց միտումներով ոչ միայն պատկերացվում են իմ կողմից կամ քաջածանոթ են ինձ, այլև վերապրվում և միաժամանակ ներքուստ իրականանում են իմ մեջ»[2]։ Լիպսը ուշադրություն է դարձրել համամասնակցության սոցիալ-հոգեբանական երևույթի վրա, որը բազմակողմանիորեն ուսումնասիրել է Լ. Լեվի-Բրյուլը[3]։ Վերը նշված հատկությունը մարդու մեջ ձևավորում է կոլեկտիվիստական մղումներ, որոնք, սակայն, բուրժուական հասարակարգում դրսևորվում են կեղծ կոլեկտիվիստական կառուցվածքներում։

---

[1] Գ. Սպենսեր, Основания психологии, СПб., 1876, т. IV, стр. 78.
[2] Т. Липпс, Руководство к психологии, СПб., 1907, стр. 321.
[3] Л. Леви-Брюль, Первобытное общество, М., 1930.

Անհատապաշտությունն էլ իր հերթին հանդես է գալիս ոչ թե որպես բնական, մարդկային հոգեբանությանը հոգեհարազատ, ներհատուկ երևույթ, ինչպես պնդում են արևմտյան տեսաբանները, այլ որպես կոլեկտիվիզմից հիասթափվելու արդյունք, իսկ ավելի ճիշտ՝ պսևդոկոլեկտիվիզմից «հոգնելու» արդյունք։ Այս միտքն ավելի պարզեցնելու համար բառափոխենք հայտնի անհատապաշտական «Ամեն ոք իր համար է, միայն աստվածն է բոլորի համար» բանաձևը հետևյալ կերպ. «Եթե աստված բոլորի համար է, ապա ամեն ոք իր համար է»։ Բանաձևի մասերի նման տեղափոխությամբ պատճառահետևանքային կապ է հաստատվում մարդկային ընդհանրությունների հանդեպ անտարբերության սկզբունքի վրա հիմնված հակամարտ հասարակական համակարգի և այդ համակարգից բխող մարդու անհատապաշտական վարվելակերպի միջև։ Այլ կերպ ասած՝ որոշ մարդիկ անհատապաշտ են ոչ այն պատճառով, որ նրանք բնությունից այդպիսին են, այլ այն պատճառով, որ նրանք այդպիսին դառնում են հասարակական զարգացման ընթացքում։ Հակամարտ սոցիալական հասարակարգի ներքին տրամաբանությունը նրանց դրդում է փնտրել և գտնել գոյատևելու միջոց։ Այդ նույն տրամաբանությունն է, որ դրդում է անհատապաշտներին միանալ և ձևավորել «գիշատիչների կոլեկտիվ»։

Հակամարտ սոցիալական համակարգերում կոլեկտիվիստական կառուցվածքների տեսակների զարգացման սիստեմատիկ շարադրանքը տվել է Ռ. Սամսոնովը[4]։ Նա քննելով կոլեկտիվիստական միտումների զարգացումը նախասոցիալիստական ֆորմացիաներից մինչև մեր օրերը, հիշատակում է Մարքսի և Էնգելսի այն միտքը, որ առանձին անհատներ դասակարգեր են կազմում սոսկ այնքանով, որքանով որ նրանք ստիպված են լինում պայքար մղել ընդդեմ որևէ այլ դասակարգի։ «Եվ եթե այդպիսի միավորումը,— գրում է Ռ. Սամսոնովը,— շահագործողական դասակարգերի շրջանակներում նշանակում է «Գիշատիչների կոլեկտիվիզմի» կազմավորում, ապա շահագործվող դասակարգերի ներսում դա սկիզբ դրեց այնպիսի կոլեկտիվիստական տենդենցների, որոնք ավելի էին զարգանում և որից, վերջին հաշվով, ծնվեց կոլեկտիվիզմի բարձրագույն ձևը՝ պրոլետարական կոլեկտիվիզմը»[5]։ Ռ. Սամսոնովը հետևողականորեն վերլուծել է տվյալ հասարակարգի տիպին համապատասխանող կոլեկտիվիզմի տարբեր ձևերը։

Կապիտալիզմի դարաշրջանը, Ռ. Սամսոնովը իրավացիորեն համարում է դասակարգային շահերի ծայրահեղ բևեռացման դարաշրջան, որպես առավել «բարենպաստ» ընդհանրության բարձրագույն ձև՝ պրոլետարական կոլեկտիվիզմի առաջացման համար։ Իսկական կոլեկտիվիզմի սկզբունքները հաստատվեցին միայն հաղթանակած սոցիալիզմի երկրներում։ Ինչ վերաբերում է կապիտալի երկրներին, ապա պետություններն այնտեղ ծառայել և շարունակում են ծառայել որպես իշխող փոքրամասնության կողմից շահագործվող մեծամասնությանը ճնշելու գործիք և այդ ճնշման ընթացքում, Մարքսի խոսքերով ասած, «կոլեկտիվության սուրոգատները» նույնպես ծառայում են այդ նպատակին։

---

4 Ռ. Սամսոնով. Կոլեկտիվիզմը ընդդեմ ինդիվիդուալիզմի, Երևան, 1962։

5 Նույն տեղում, էջ 62։

Մարքսն ու Էնգելսը նշել են, որ մինչև իրենց ժամանակները գոյություն ունեցող կոլեկտիվության սուրոգատներում՝ պետությունում և այլն, անձնական աղատություն գոյություն ուներ միայն իշխող դասակարգի շրջանակներում դարդացած անհատների համար և այնքանով, որքանով նրանք այդ դասակարգի անհատներն էին, կեղծ կոլեկտիվությունը, որի մեջ միավորվել էին անհատները, միշտ էլ հակադրվել է նրանց իբրև ինչ-որ ինքնուրույն մի բան։ Եվ քանի որ այն հիմնականում իրենից ներկայացրել է մի դասակարգի միավորումն ընդդեմ մյուսի, ապա ենթակա դասակարգի համար այն հանդիսացել է ոչ միայն իբրև բոլորովին պատրանքային կոլեկտիվություն, այլև որպես նոր կապանքներ[6]։

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը դեռ անցյալ դարում տեսան բուրժուական հասարակարգի այն կեղծ կոլեկտիվիստական միտումները, որոնք շարունակում են գարդանալ կապիտալի երկրներում նաև մեր օրերում։ Ինչպես նշում է Յու. Զամոշկինը, ժամանակակից կապիտալիզմը իր գոյությունը պահպանելու նպատակով սահմանափակում է իշխող դասի անհատապաշտական միտումները և յուրահատուկ բարոյական «նորմեր-շրջանակներ» է մշակում։ Այդ բարոյական համակարգը հասարակության յուրաքանչյուր անդամից պահանջում է հնազանդվել բուրժուական հասարակական օրգանիզմի անհրաժեշտ կողմը կազմող բաղմապիսի օրենքներին, կարգապահական պատվիրաններին և կանոններին, սահմանափակումներին ու արգելքներին։ Դրանք մրցակցային պայքարի կարգը, արարողությունն ու շրջանակները կանխորոշող կանոններ ու օրենքներ են։ Մի խոսքով, կանոններ, որոնք կարգավորում են բուրժուական հասարակական օրգանիզմը, որոնք գործնականում կիրառվելիր այս կամ այն վարվելամիջոցների ու եղանակների թույլատրվածությունն են սահմանում[7]։

Այսպիսով, ինդիվիդուալիզմը «նպատակ-նորմերի» միջոցով կոնֆլիկտի մեջ է մտնում «շրջանակ-նորմերի» հետ։ Կապիտալիզմի չդրված բարոյականությունը թելադրում է ձեռնարկատիրոջը՝ հարստացիր, հզորացիր, ինչ գնով էլ լինի. դու պետք է ուրիշից ուժեղ լինես, այլ կերպ քեզ կոչնչացնեն, այլ կերպ ուրիշի, քեզանից ավելի ուժեղի ղոհը կդառնաս։ Սակայն, երբ մրցակցային պայքարի չդրված կանոնների այդ հրամայական կանչին հետևում են բոլորը, ապա հասարակության զարգացման որոշակի փուլում անհատապաշտական գործելաեղանակները հակասության մեջ են մտնում հասարակության ընդհանուր շահերի հետ և հակամարտ հասարակարգը, իր գոյությունը պահպանելու համար, մրցակիցների համագործակցությամբ ավելի հաճախ է դիմում կոլեկտիվիստական սկզբունքներին։ Բայց դա, ինչպես նշել է Մարքսը, «գիշատիչների կոլեկտիվիզմ է» և իր բնույթով հարկադրական։ Այն բխում է ոչ թե մարդկանց՝ միմյանց հետ շփվելու պահանջից, որի հիմքում ընկած են բնական մարդկային զգացումը, ցանկությունները, դիմացինի հոգսերով ապրելը, ուրիշինը իբրև սեփական զգալը, այլ գոյատևելու անհրաժեշտությունից։ Սա արհեստական կոլեկտիվիզմ է, որն իր ճանապարհը հարթում է ոչ թե սրտի թելադրանքով, այլ ձևականորեն մշակված, բյուրոկրատիզմի մակար-

---

[6] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 75.

[7] Ю. Замошкин, Кризис буржуазного индивидуализма и личность, М., 1967, стр. 15.

դակով վավերացված կանոններով ու հրահանգներով։ Եվ այն, որ ժամանակակից կապիտալիստական հասարակարգը ինքնապաշտպանության նպատակներից դրդված, այսօր արգելք է դառնում անհատապաշտության առջև, հույժ հատկանշական է հենց այդ գաղափարախոսության էվոլյուցիայի առումով։

Զամոշկինը բացահայտում է բուրժուական հասարակարգին հատուկ սոցիալական արատները՝ թշնամանքը դեպի ուրիշները, մենակությունը, մեկուսացվածությունը, իռացիոնալ մտատրամադրությունը, օտարումը ուրիշներից. այդ արատները հանդես են գալիս իբրև հաջողության չհասած մարդկանց սոցիալական բողոքի առանձնահատուկ ձևեր, այն մարդկանց, որոնք հասարակությունում ձգտելով ինքնահաստատման, գերագնահատելով իրենց ուժերն ու կարողությունները, հույս դնելով միայն սեփական ուժերի վրա և արհամարհելով ուրիշների ձգտումներն ու շահերը՝ առավելապես հենվում են անհատապաշտական փիլիսոփայության վրա։

Անհատապաշտության անարգել զարգացումը ժամանակի ընթացքում ստեղծեց այնպիսի վիճակ, որ այսօր մի բուռ խոշոր ձեռնարկատերերի քմահաճույքին են ենթարկվում միլիոնավոր մանր, միջին և նույնիսկ խոշոր տնօրեններ։ «Ինչպես կազմակերպել մրցությունը» աշխատության մեջ Լենինը ամենայն ճշգրտությամբ արձանագրեց իրեն ստեղծող հասարակության հետ կոնֆլիկտի մեջ մտած անհատապաշտության հոգևարքը։ Լենինը նկատում է, որ սոցիալիստներին մեղադրում էին, որ իբր նրանք չէին ցանկանում հաշվի նստել կապիտալիստների այնպիսի առաքինությունների հետ, ինչպիսիք են մրցակցությունը, մասնավոր նախաձեռնությունը և այլ արժեքներ, որոնք, ըստ այդ քննադատների, մարդկային էությունն են կազմում։ Իսկ գործնականում ոչ թե սոցիալիստների չար կամքով էին նսեմանում այդ բարեմասնությունները, նկատում է Լենինը, այլ կապիտալիզմի զարգացման շնորհիվ։ Հետագա մրցակցությունը, ինչպես հայտնի է, փոխարինեց մանր ապրանքային ինքնուրույն արտադրությանը, որի ժամանակ մրցակցությունը շատ թե քիչ նպաստում էր ձեռնարկատիրոջ մեջ էներգիայի, հանդգնության, նախաձեռնության դաստիարակմանը, իսկ խոշոր ֆաբրիկաների արտադրությամբ՝ ակցիոներական ձեռնարկություններով, սինդիկատներով և այլ մոնոպոլիաներով, դրանք աննախընթաց գաղանային ձևով ճնշում էին հենց այն առաքինությունները, որոնցով այդքան հպարտանում էին բուրժուական տեսաբանները[8]։

Ահա ինչու, արդի կապիտալիզմը ստեղծված վիճակից «աղատվելու» ելքը տեսնում է իր հետ սերտորեն կապված «կոլեկտիվների» կազմակերպման մեջ։ Ըստ որում, այդպիսի բյուրոկրատական կեղծ կոլեկտիվի գործունության օբյեկտիվ տրամաբանությունը, ինչպես նշում է Զամոշկինը, ի վերջո, նրա մեջ անտարբերություն է ներարկում դեպի անհատի էական զարգացման պահանջները։ Հեղինակը այստեղ վկայակոչում է Մ. Վեբերին, որն անդրադարձավ խոշոր բիզնեսի կազմակերպման մի միտումին։ Այդ բիզնեսը «...զարգանում է այնքանով, որքանով ավելի կաասարելագործված է, ավելի հակամարդկային է նրա բյուրոկրատիան, որքանով ավելի ամբողջա-

[8] В. И. Ленин. Полн. собр. соч., т. 35, стр. 195.

կան է հաջողվում արտաքսել պաշտոնական փոխհարաբերությունների ոլորտից սերը, ատելությունը և բոլոր զուտ անձնական տարրերը»[9]։

Մարդկային ապաանհատականացման, նրանց փոխհարաբերությունների պաշտոնականացման և ձևականացման, անհատական վարքագծի սահմանափակման, գործողությունների դաժան մանրախնդրության միտումը, ըստ Վերների, այսօր կազմում է բյուրոկրատիայի ուրույն դիմանկարը և ազդարարվում է իրև միայն նրան հատուկ արժանիք։

Թե ինչպես է անհատապաշտությունը կեղծ կոլեկտիվիզմի փոխակերպվում, ցույց է տալիս նաև Վերներ Զոմբարտը։ Նա նշում է, որ վաղ քրիստոնեական շրջանի հնառճ բուրժուան սանձարձակ անհատապաշտության փիլիսոփայությունն էր դավանում՝ հանուն իր անհագ ձեռքբերումների, նա «ոսկե երկրներ էր որոնում, մոլեգնում էր ճոխության մեջ, շլացուցիչ դղյակներ էր կառուցում մարդկանց իր փառահեղությամբ ապշեցնելու նպատակով, սակայն ժամանակի ընթացքում, զգալով, որ այդպիսի խենթություններով կկործանի իրեն, քաղքենիական բարեկեցության զսպաշապիկ հագավ, սովորեց հաշվել։ Նրա ճանկերը կտրատվեցին, գիշատչի ատամները սղոցվեցին՝ կոտոշները քողարկվեցին կաշվե բարձիկների մեջ»[10]։ Ողջ մնալու համար բուրժուան խաղաղվեց բարեկեցիկ գոյության նավահանգստում։ Զոմբարտի պատկերավոր բնութագրմամբ, բուրժուաները երեկ ծովահեններ, սուսերին վարպետորեն տիրապետողներ ե անձնական խիզախությամբ ու հանդգնությամբ հաջողության հասնող մեծաշուք բախտախնդիրներ էին, իսկ այսօր «...մեծ կոմբինատորներ են, մարդիկ են, որոնք իրենց մեջ զուգակցում են տարբեր նախաձեռնական տիպեր, լինելով միաժամանակ ավազակներ ու ճարպիկ կալկուլյատորներ, կալվածատերեր, շահագետներ։ Այսօր նա կոլեկտիվ ձեռնարկատիրոջ, կապիտալիստական ձեռնարկատերերի կոլեգիայի հովանու տակ է, որը գլխավոր դիրեկտորների պաշտոնով դինված՝ հսկա ձեռնարկությունների ղեկն է վերցրել. նրանցից յուրաքանչյուրը, առանձին հատուկ ֆունկցիաներ է կատարում և միայն ամբողջությամբ այդ կոլեգիան կազմում է միասնական կամ մեծ ձեռնարկատեր»[11]։

Իր արտասովոր ենթադրություններում, Զոմբարտը բուրժուայի հոգևոր աշխարհը դիտում է որպես նրա կենսաբանական էության դրսևորում, պնդելով, որ երկու մարդկային տիպերի՝ ալտրուիստների և եսասերների, առկայությունը պայմանավորված է նրանց ծագմամբ։ Առաջիններին նա վերագրում է ընտրյալ, վսեմ մարդկանց դասի հատկանիշներ, որոնց բնությունից է տրված կյանքից հաճույք ստանալու ընդունակությունը։ Ըստ Զոմբարտի, դա հետևանք է այն բանի, որ նշված տիպի մարդիկ կողմնորոշված են դեպի միջավայրը, նրանք մասնակից են աշխարհի դատին և հոգեպես էլ շռայլ, զգայուն են դեպի ուրիշի ցավը։ Մի խոսքով, դրանք եղակիների, փոքրամասնության դասին են պատկանում։ Ինչ վերաբերում է երկրորդներին, ապա դրանք առաջիններիի հակապատկերներն են և բնութագրվում են ամենից առաջ անտարբերությամբ դեպի միջավայրը, այնինչ բավականին զգայուն են

---

[9] Ю. Замошкин, նշվ. աշխ., էջ 17։

[10] В. Зомбарт, Буржуа. Этюды по истории современного экономического человека, М., 1924, стр. 120.

[11] Նույն տեղում, էջ 133։

սեփական հոգսերի նկատմամբ, առավել հաշվենկատ անձնական ունեցվածքի, նույնիսկ սեփական հոգու համար: Դրանք «նախորային» մարդիկ են. «Ոչ-քաղքենիները քայլում են աշխարհով մեկ, —շարունակում է իր դատողությունները Զոմբարտը,— ապրելով, հայեցելով, խորհելով, զննելով. քաղքենիները կարգավորում են, դասդիարակում, խրատում: Առաջիններները երազում են, երկրորդները հաշվում: Փոքրիկ Ռոքֆելլերը դեռ երեխա հասակում արդեն փորձառու հաշվետար էր... ապրում են կամ տնտեսելու, կամ սիրելու համար, տնտեսել՝ նշանակում է պահպանել, սիրել՝ ուրեմն՝ շռայլել»[12]:

Զոմբարտը մոտ է ճշմարտությանը, երբ նկարագրում է, և պատահական չէ, որ նրա դատողությունների հենց այդ մասն է մնում ընթերցողի հիշողության մեջ: Բայց երբ նա փորձում է հիմնավորել իր թեզերը, ոչ մի փաստարկ չի կարողանում բերել: Զոմբարտը միանգամայն անապացույց է կապիտալիստական ոգու ժառանգած նախատրամադրվածությունների մասին իր դատողություններում[13]: Ճիշտ է, նա վկայակոչում է Վունդտի միտքը՝ բնազդի, իբրև կուտակված փորձի մասին, որն ապրում է ենթագիտակցության ոլորտում, սակայն դրանով նա հակասության մեջ է ընկնում: Հայտնի է, որ Վունդտը, հիմնավորելով իր այդ միտքը, գտնում էր, որ կամային ու բնազդային գործողությունները դասդիարակվում են մի քանի իրար հաջորդող սերունդների ընթացքում, և նախատրամադրվածությունը դեպի ապրելաոճի այս կամ այն տեսակը նույնպես մի քանի սերունդների ընթացքում հասունացած, որոշակի սոցիալական կատեգորիայի սահմաններում մշակված ապրելակերպի արդյունք է: Նույն երևույթին թռուցիկ, բայց շատ դիպուկ անդրադարձել է Պյեր Դանինոսը իր «Մայոր Տոմսոնի գրառումների» մեջ[14], ուր նա տվել է արդի ֆրանսիական բուրժուայի սոցիալ-հոգեբանական դիմանկարը: Դիտելով սոցիալ-հոգեբանական փոփոխությունները մի բուրժուական ընտանիքում երկու-երեք սերունդների ընթացքում, Դանինոսը նկատում է, որ, իբրև կանոն, զուտ սոցիալական բնույթ ունեցող հայրերի պրոբլեմը, զավակների մոտ հոգեբանական է դառնում: Այդ պրոցեսի մեջ կարելի է նկատել քանակից որակի անցման դիալեկտիկական օրինաչափության հաստատումը: Այսպիսով, այն, ինչ մենք, ըստ սովորության, կենսաբանական նախատրամադրվածության հետևանք ենք համարում, հիմքում ունի սոցիալական աստառ: Նույնչափ սխալ կլինի կարծել, որ հակվածությունը դեպի եսասիրությունը, քաղքենիությունը, անհատապաշտությունը մարդու էությունից անբաժան են, ավելի շուտ դրանք հասարակության հակամարտ զարգացման ընթացքում են ձևավորվում:

Իհարկե, լինում են բացառություններ, երբ բուրժուական ընտանիքից ելածները միշտ չէ, որ անպայման ժառանգում են անհատապաշտական հատկություններ: Կյանքն ամենահակասական տարբերակներ է առաջադրում, որտեղ ավանդույթների հաջորդականության հետ մեկտեղ հանդիպում են նաև հակադրություններ: Միշտ չէ, որ խոշոր ձեռնարկատիրոջ զավակը ժառանգում է հոր պրագմատիստական ոգին: Երբեմն նա անսպասելիորեն, հակառակ հարազատների ակնկալիքներին, իր նկատմամբ բացարձակ անտարբե-

---

12 Նույն տեղում, էջ 161:

13 Նույն տեղում, էջ 155:

14 П. Даннос, Записки манора Томсона. Некий господин Бло, М., 1970.

ությունն է ցուցարկերում և կապվելով մի խումբ երկարամազ կիթառահարների հետ, նախընտրում է թափառաշրջիկի անհանգիստ, կիսաքաղց ապրելակերպը, հրաժարվելով հարմարավետ կյանքից, որին նախապատրաստում էր նրան հայրը։ Հնարավո՞ր է արդյոք այս դեպքում պնդել, թե անփույթ զավակը ժառանգել է իր նախնիներից այն մեկի հատկությունները, որը խենթությամբ է աչքի ընկել։ Իսկ եթե նման դեպքեր այնքան հաճախ են տեղի ունենում, որ բացառությունից կանոն են դառնում, ապա դա ինչո՞վ բացատրել։ Ինչպե՞ս դատճառաբանել, որ «հիպպիների» շարքերը հիմնականում համալրվում են բուրժուական ընտանիքներից։ Արդյոք դա մոդա՞ է, կամ լ կոնֆորիզմի յուրահատուկ ձև՞, ասել է կոնֆորիզմի ժխտում, որը, ի վերջո, նույնպես կոնֆորիզմ է։ Պարզ է, որ երբ որևէ մեկը, ըմբոստանալով միջավայրի դեմ, այդ բողոքը արտահայտում է նրանով, որ որոշում է առաջին հերթին իր արտաքինով, զբաղմունքներով շնմանվել մեծամասնությանը, նա դրանով նոր էջ չի բացում հասարակական զարգացման պատմության մեջ։ Նա միայն ուշադրություն է գրավում (ես քո իմացածներից չեմ) և դառնում է ընդամենը մի էկզոտիկ երևույթ։

Մեր խնդիրը չէ ճշգրտել սերունդների բաժանման դրդապատճառները բուրժուական հասարակարգում, բայց այն, որ տվյալ բարոյական հակադրությունը պայմանավորված է հասարակական և ոչ թե կենսաբանական գործոնով, դրանում կասկած լինել չի կարող։ Դա միաժամանակ բարոյական բողոք է կեղծիքի, երեսապաշտության դեմ, բողոք հասարակական այնպիսի դրվածքի դեմ, որն անջրպետում է մարդկանց, յուրաքանչյուրին որոշակի, «մասնակի» դեր է հատկացնում սոցիալական հիերարխիայում։ Եվ քանի որ երիտասարդությունն ավելի սուր և անմիջականորեն է արձագանքում բարոյական շեղումներին, նրան բախտ է վիճակվում յուրովի վրեժխնդիր լինել մարդկային բարոյական սկզբունքներին հայրերի դավաճանության համար։

Միայն մարդու աղատագրումը սեփականության ճնշման լծից կաղատագրի նրան և բարոյական իմաստով, կվերադարձնի մարդու կողմից մուացության մատնված նրա նախասկզբնական էությունը։ Իսկ այդ էությունը, ինչպես նկատել է Մարքսը, դեռևս չունի իսկական իրականություն։ Պատմությունն է միայն, որ իրեն ենթարկելով հասարակական իրականությունը, հասնում է իսկական մարդկային պրոբլեմների մակարդակին[15]։ «Իսկական մարդկային պրոբլեմների» ուսումնասիրությունը, իհարկե, հնարավոր է միայն կոնկրետ հասարակության, հասարակական-տնտեսական ֆորմացիայի կոնկրետ տիպի քննության միջոցով։ Իսկ բուրժուական սոցիալ-հոգեբանները զանգվածային երևույթների հոգեբանությանը նվիրված իրենց ուսումնասիրություններում դիտավորյալ, թե տարերայնորեն բուրժուական հասարակարգի արատներին հավիտենական բնույթ են վերագրում՝ տարածելով այդ արատները համայն մարդկության վրա։ Եվ, ի վերջո, հակամարտ հարաբերությունների, հասարակական կառուցվածքով աղավաղված սոցիալական հոգեբանության հատկությունները ներկայացնում են որպես ընդհանրապես մարդուն օրդանապես հատուկ հատկություններ։ Դրանով էլ տվյալ հասարակարգի արատները հոգեբանացվում են և դուրս բերվում մարդու էությունից։ Շատ

---

15 К. Маркс, К критике гегелевской философии права. М., 1936. стр. 78.

հարմար և հակամարտ հասարակարգի գոյությունը արդարացնող մոտեցում է։ Տարդի և մյուսների կարծիքով, ազատության մասին եղած տրտունջները առհասարակ իզուր են. իսկ դուք համոզվա՞ծ եք, որ մարդը ձգտում է ազատության. ասում են նրանք և ավելացնում. «Մասսայական» մարդը, «փողոցի» մարդը իր էությամբ և՛ ստրուկ է, և՛ բռնապետ։ Ստրուկ է, երբ ենթարկվում է, բռնապետ՝ երբ ինքն է ենթարկում։ Նրանց ըմբռստությունը կարելի է որակել որպես «սոցիալական հիվանդություն»[16]։ «Եվ հիշտ դրա համար, մենք «նորմալ» ենք համարում այն մարդկանց, հայտարարում է Տ. Շիբուտանին, որոնք հեշտությամբ են հարմարվում մեր հասարակական կառուցվածքին, ներգծվում են նրա մեջ, յուրացնում են «տվյալ ֆորմացիաների ստերեոտիպերը, ստանդարտները»[17]։ Եվ քանի որ բողոքները որակվում են որպես հիվանդություն, բնական է, որ արևմտյան սոցիոլոգների մեծամասնությունը ավելորդ է համարում ուսումնասիրել զանգվածային շարժումների ներքին մեխանիզմը (եթե հիվանդություն է, պետք է կասեցնել նրա զարգացումը) և օրակարգի հարց է դարձնում միայն այդ շարժումների ճնշումը։

Զանգվածային հոգեբանության այդպիսի բնութագրման մեթոդոլոգիան հանգեցնում է նրան, որ աշխատավորության յուրաքանչյուր հաղթանակը իր իրավունքների համար մղած պայքարում գնահատվում է որպես սոցիալական հետադիմություն։ Իսկ պատմությունը, հասարակական պրակտիկան վկայում են, որ հասարակական իդեալների յուրաքանչյուր նվաճում կարելի է միաժամանակ դիտել նաև որպես իսկական կոլեկտիվիստական հոգեբանության հաղթանակ, որը հիմնված է ոչ թե հաշվենկատության կամ էլ մարդկային հույզերի ճնշման վրա, այլ աշխատավորական լայն զանգվածներին դեպի ստեղծագործ կյանք կոչող հույզերի ազատագրման վրա։ Եվ եթե կապիտալիզմի առաջացումը նպաստեց մարդու հասարակական ձակատագրի զարգացմանը, ապա սոցիալիզմը հանգեց եկավ որպես հաղթանակած կոլեկտիվիզմի հասարակարգ։ Մարքսի արտահայտությամբ «իսկական կոլեկտիվիզմի» հոգեբանության ուսումնասիրությունը սոցիալիզմի ժամանակ գիտական հիմունքների վրա է դրվում։ Այդ ուսումնասիրությունները անհրաժեշտ են մեր հիմնարկ-ձեռնարկություններում օպտիմալ կոլեկտիվիստական մոդել ստեղծելու, դրանց կոլեկտիվների սոցիալ-հոգեբանական զարգացման պլանները մշակելու համար։ Ահա թե ինչու է անհրաժեշտ բացահայտել կոլեկտիվիստական հոգեբանության էական բնութագիրը և բնորոշել անհատի ու կոլեկտիվի փոխհարաբերությունների հիմնական հատկանիշը։

Պատմությունը և հասարակական զարգացման պրակտիկան հաստատում են, որ ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի սկզբունքների հիմքում ծագումնաբանորեն ծրագրված և ինչ-որ իռացիոնալ ֆենոմեն չի ընկած։ Հարցի էությունը հասարակական հարաբերություններում դրսևորվող գործնական, ակտիվ հոգեբանական հատկության մեջ է, որն, ըստ Մարքսի նուրբ դիտողության, անվերապահ անհրաժեշտություն է դառնում այնպես, ինչպես իրեն տեսնելու համար հայելու մեջ նայելու պահանջը[18]։

---

16 Г. Тард, Социальные этюды, СПб., 1907, стр. 121.
17 Т. Шибутани, Социальная психология, М., 1969, стр. 236.
18 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 62.

КОЛЛЕКТИВИСТСКИЕ СТРУКТУРЫ В АНТАГОНИСТИЧЕСКОМ ОБЩЕСТВЕ

ВЛАДИМИР ДОЛУХАНЯН

Резюме

Антагонистическая система с целью сохранения своей социальной структуры, усилиями своих теоретиков стала разрабатывать нормы искусственного коллективизма, названного К. Марксом «суррогатами коллективности».

Буржуазное общество, создавшее индивидуалистическую мораль, вступило, таким образом, в конфликт с собственными частнособственническими этическими принципами и приступило к разработке моделей «коллективизма хищников» (К. Маркс) — кооперативного коллективизма, «группизма» и других общностей, преследующих узкогрупповые цели.

Рассмотрение некоторых буржуазных теорий коллективизма, индивидуализма, дающих либо внесоциальную идеалистическую трактовку эгоизма, индивидуализма, альтруизма (Вернер Зомбарт), либо представляющих коллектив как подсознательную человеческую общность, основанную па принципе подражания (Г. Тард) ,приводит к выводу, что в процессе общественного развития принцип подлинной коллективности пробивает себе дорогу в борьбе с индивидуализмом, конформизмом, лжеколлективизмом и другими суррогатами коллективности, полностью реализуясь лишь в условиях неантагонистического социалистического общества.